

## ԷԶԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՄՈՒԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1920—1990 թթ.)

Երևանի պետական համալսարանը, ուսումնագիտական առաջատար հաստատություն լինելուց բացի, նաև պարբերական մամուլի հրատարակության նշանավոր կենտրոն է մեր հանրապետությունում: Ինչպես աշխարհի շատ համալսարաններում, այնպես էլ այստեղ, նրա կազմավորման առաջին իսկ օրերից, մեծ աշխատանք է տարվում պարբերական մամուլ ստեղծելու ուղղությամբ: Հիշարժան է այն փաստը, որ 1919 թ. մայիսի 16-ին հիմնադրված Հայաստանի համալսարանի բացման հանդիսավոր արարողությունը, որը տեղի է ունեցել 1920 թ. հունվարի 31-ին, նշանավորվել է նույն օրը տպագրված և այդ պատմական իրադարձությունը նվիրված «Հայաստանի համալսարան» միօրյա թերթով: Այդ թերթը, ինչպես նշված է նրա գլխագրում, հղել է «Նվեր Հայաստանի անդրանիկ համալսարանին»: Այն ունի «Գիտությունը ուժ է» նշանաբանը: Առաջին էջում գետեղված փոքրիկ խմբագրականը ընթերցողներին ծանոթացնում է, որ «Հայաստանի համալսարան» միօրյա թերթը հրատարակվում է իբրև հավերժացման նշան նույն համալսարանի Եկամտը հատկացվում է նույն համալսարանի շրջվոր ուսանողների «Գիտադարձ օգնության ֆոնդին»: Թերթում հիշատակվում չկա նրա խմբագրի, լույսընծայման տեղի ու տպաքանակի մասին: Ըստ երևույթին այն տպագրվել է Ալեքսանդրապոլում, որովհետև Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել այնտեղ: Թերթը բուցվում է «Դեմոկրատական համալսարանը» առաջնորդողով, որի հեղինակն է Հայաստանի համալսարանի կազմակերպիչ ու առաջին ռեկտոր, պրոֆ. Յու. Ղամբարյանը: Այնուհետև նրանում տպագրված են բազմաթիվ նյութեր, որոնք պատկանում են ժամանակի մեծանուն գիտնականների գրչին և նվիրված են համալսարանի դերին ու նշանակությանը:

«Հայաստանի համալսարան» թերթի լույս ընծայումից հետո որոշաչի աշխատանքներ են ծավալվում համալսարանում պարբերական մամուլ ստեղծելու ուղղությամբ: Սակայն տևտեսական ու քաղաքական աննպաստ պայմանները թույլ չեն տալիս այդ անելու: Ինչպես հայտնի է, համալսարանը նախուսեց հիմնադրվել էր Երևանում, որը 1919 թ. դեկտեմբերի 6-ից փոխադրվում է Ալեքսանդրապոլ, ուր մեկ կիսամյակ գործելուց հետո, 1920 թ. աշնանը դարձյալ փո-

խադրվում է Երևան. Բայց սյուսեղ էլ պարսպմունքները չեն վերսկսվում: Այդ ծանր օրերին է, որ Հայաստանում հաստատվում են խորհրդային կարգեր, որից անմիջապես հետո, 1920 թ. դեկտեմբերի 5-ին որոշվում է դիմել հանրային կրթության նոր նախարարին՝ համալսարանում պարսպմունքները սկսելու վերաբերյալ: 1921 թ. հունվարի 23-ին տեղի է ունենում համալսարանի պաշտոնական բացման հանդիսավոր արարողությունը, իսկ հաջորդ օրը՝ հունվարի 24-ին, սկսվում են պարսպմունքները:

Երևանի ժողովրդական համալսարանի հիմնադրման առաջին իսկ օրերից նրա ուսումնագիտական կյանքն ու առօրյան լուսաբանելու համար մեծուպես ոգտագործվում էր ստորին մամուլը, որի աշխատանքները միշտ էլ եղել են կուսակցական և կոմերիտական բիչիչների ուղղորդության կենտրոնում: Այդ է վկայում նաև այն փաստը, որ 1924 թ. փետրվարի 12-ին կոմերչի բյուրոն լսել է պատի թերթերի խմբագրի նախագահ Նսիրի Զարյանի զեկուցումը և որոշում կայացրել համալսարանում պատի թերթեր հրատարակել երկու շաբաթը մեկ անգամ<sup>1</sup>: Դրա հետ մեկտեղ արդեն անհրաժեշտություն էր դարձել ուսանողական տպագիր օրգանի ստեղծումը:

Համալսարանի խորհուրդը որոշում է կայացնում «Նոր ուսանող» անվամբ ամսագիր հրատարակելու առթիվ: Ամսագրի առաջին և միակ համարը լույս է տեսել 1924 թ. մարտին: Այն Հայաստանի պետական համալսարանի ուսանողական խորհրդի օրգանն է<sup>2</sup>, նրանում տպագրված են համալսարանի ռեկտոր Հ. Հովհաննիսյանի «Նոր ուսանողին» ուղղված բարի երթի ու ողջույնի խոսքը: Համարում տպագրված են նաև հատվածներ Ա. Մոսովյանի, Ա. Հովհաննիսյանի, Ս. Լուկաշինի՝ համալսարանի

<sup>1</sup> Տե՛ս Հասարակական-քաղաքական հետազոտությունների ինստիտուտի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 116, գ. 8, թ. 12:

<sup>2</sup> «Նոր ուսանող» ամսագիրը չնայած ստորագրել է «Նմբագրական կոլեգիան», սակայն արխիվային փաստաթղթերից իմանում ենք, որ նրա խմբագիրը եղել է Ն. Զարյանը: Մավալը՝ 72 էջ, լսփսր՝ 27×18 սմ: Տպաքանակը չի նշված:

ճանձյա տոնակատարութեան ժամանակ արտասանած ճառերից: Ատեղծված են նաև մի շարք նյութեր՝ նվիրված Նորհրդային Միության և արտասանման ռուսախոսական կյանքին ու նրանց հնդկափոխական շարժումներին: Որոշ նյութեր էլ նվիրված են այն ժամանակվա համալսարանի ստորյային ու պատմութեանը:

Ամսագրում հոդածներ, բանաստեղծություններ և պատմվածքներ ունեն Ն. Զարյանը, Գ. Մահարին, Գ. Վանանդեյին և Արուսուր: Իսկ Միք. Թարութեանը հանգես է էլիջ Ենութեր Հայաստանի սեփական համալսարանի պատմության համար ընդարձակ ու ռումբափրութեանը: Տպագրված են նաև «Երևանի բանվորական ֆակուլտետը», «Համալսարանի դիտական խմբակները» նյութերն ու արտասանման թարրեր երկրներից ստացված ողջույնի հետադրեր: Ընդ որում հոգրած ձևավորված է դիզեցիկ, հարուստ է լուսանկարներով ու աղյուսակներով ծավոք, տպագրատեխնիկական դժվարությունների հեռավանդում այդ թիվակ համարից հետո նրա հրատարակությունը չի շարունակվել:

Երևանի համալսարանում «Ընդ որում ուսանողից» հետո դարձյալ հրատարակվում են ձևազիր թերթեր, որոնց 1928 թ. սկզբից փոխարինելու է դալին «Պրոլետարական ուսանող» համահամալսարանական պատի թերթ: Սակայն, ինչպես այս վերջինս, այնպես էլ ֆակուլտետներում առթից առթ լույս տեսնող մյուս թերթերը չեն կորոպտում ժամանակին արձագանքել համալսարանում տեղի ունեցող իրադարձություններին և բազմաթիվ հուզող հարցերին:

Համալսարանի կուսակցությունում 1929 թ. հոկտեմբերին հարց է դրվում հրատարակել տպագիր թերթ: Այդ առթիվ կայացվում է որոշում: Պրահայի մեկ ամիս սուց, նոյեմբերի 29-ին՝ Հայաստանի խորհրդայնացման օրը, լույս է տեսնում «Ընդ որում կադրեր» երկշաբաթաթերթի անդրառնիկ համարը: Նրա խմբագրական հոգվածում լրագրի խնդիրների ու նպատակների մասին ասված է. «Ընդ որում կադրեր» այժմ հնարավորություն չունի դառնալու լուրջ դիտական-քաղաքական օրդան (այդ հետագայի բան է): Նա փոխարինում է անցյալ տարվա մեր համալսարանական պատի լրագրին, սակայն այն տարբերությամբ, որ նա իր շտաբը համախմբող ուժերով, քննությունն առնելիք խնդիրներով և որակով ավելի բարձր է լինելու, քան «Պրոլետարական ուսանողը»... «Ընդ որում կադրեր» օժանդակելու է դաստիարակության կազմին՝ քննությունն դեռևս դասավանդման մեթոդները, վերակառուցման և առհասարակ ակտիվ մեթոդներին անցնելու խնդիր-

ները: Նա հուշի է ունեցու այս կամ այն գրաստիտի և կորթի դրահան փորձը այս ապարդիզում՝ այն բոտ հնարավորության ընդհանրացնելու նպատակով: «Ընդ որում կադրեր» մյուս խնդիրն էլ եղել է ինքնաքննադատության համալսարանում նկատվող բացերն ու թերությունները վերացնելը: Հասարակական քաղաքական կազմակերպությունների աշխատանքներում աշխատությունն մտցնելը: Սակայն գրանք չեն իրականացվել, որովհետև թերթն ունեցել է կայուն հատկություն, լույս է տեսել ընթացիկ 3 համար. 1-ինը՝ առանձին, իսկ 2-րդը և 3-րդը՝ միացյալ:

ԽՍՀՄ-ում 1936 թ. տեղեկացվում է բունների վերահասուցում, Երևանի պետական համալսարանի ֆակուլտետների հիման վրա ստեղծվում են ինքնուրույն ինստիտուտներ: Այս պատճառով էլ դադարում է «Ընդ որում կադրեր» տպագրությունը: Այնուհետև, 1931--32 թթ. լույս է տեսնում համալսարանի ուսանելիքների կողմից վաղորդ պատրաստված «Երևանաբարդ հարվածային» պատկերազարդ հանդեսի 4 համար՝ 2 միացյալ պրակով: Երբ 1933 թ. սեպտեմբերին վերաբացվում է Երևանի համալսարանը, նրա խորհուրդը անմիջապես օրովարդ է մտցնում թերթի հրատարակության հարցը: Եվ այդ ուստարվանից էլ սկսում է լույս տեսնել «Հարվածային ուսանող» կիսամյա թերթը, որը եղել է համալսարանի կուսակցական, ԿԾՄ կուրյուրների և արհմիութենի օրգանը: Այն հրատարակվել է մինչև 1936 թ. վերջը, որից հետո, շտաբ մեկուկես տասնամյակ, համալսարանը թերթ չի ունեցել:

1950 թ. նոյեմբերի «Ծ-ին» Հայաստանի խորհրդայնացման 30-ամյակի օրը, վերակազմում է թերթի հրատարակությունը: Այս նոր շտաբաթերթը կրում է «Մովսեսական ուսանողություն» անվանումը, որը 1955 թ. մայիսի 9-ից վերանվանվում է «Երևանի համալսարան» և այդ անվամբ հրատարակվում է մինչև այսօր:

Երևանի համալսարանն թերթը, փաստորեն,

<sup>4</sup> «Ընդ որում կադրեր», 29 նոյեմբերի 1929 թ., № 1, էջ 2:

<sup>5</sup> «Երևանաբարդ հարվածայինը» կատարել է դասագրքի դեբու Մավալը՝ 82—172 էջ, շափար՝ 25×17 սմ, տպագրանակը չի նշված: Ամենց էլ «Երևանաբարդ» կոչվելու:

<sup>6</sup> «Հարվածային ուսանողը» խմբագրել են Ռ. Փորսաղյանը, Ա. Հարենցը (Հարությունյան): Գ. Ոսկանյանը: Մավալը՝ 4 էջ- շափար՝ 42×30 սմ:

<sup>7</sup> «Մովսեսական ուսանողությունը» խմբագրել են Գ. Հարությունյանը, Ա. Բաղևադյանը, Մ. Մելիքյանը, Մ. Հակոբյանը, Ռ. Հարությունյանը, «Երևանի համալսարան» անվանվելուց հետո՝ Ս. Ավագյանը, Բ. Գալստյանը, Ս. Ասրուբաբյանը, Ս. Աբրահամյանը, Խ. Վարդանյանը, 1971-ից՝ Վ. Մաղալյանը: Մավալը՝ 4 էջ, շափար՝ 42×30 սմ, տպագրանակը՝ 1000—3500:

<sup>3</sup> «Ընդ որում կադրեր» Էրկշաբաթաթերթը ունեցավ «Երևանի պետական համալսարանի» անվանումը: Խմբագիր՝ Արսեն Եսաբյան: Մավալը՝ 22 էջ, շափար՝ 31×24 սմ, տպագրանակը՝ 200: Տպագրված է ձևագրից, ակտիվ-տիպ եղանակով:

իր նախորդների լավագույն ավանդույթների շարժառիթովը հզամ Հայաստանի մայր բուհում: Նրա օրինակով 1950-ական թթ. կեսերից սկսած ենք հանրապետության մյուս բուհերում ևս քառասունամյակի թերթեր, և այդպիսով մեր նորագույն լրագրության պատմության մեջ առաջացավ բուհական մամուլ հասկացությունը:

ԵՐԵՎԱՆԻ Համալսարանը լինելով այդ մամուլի առաջնակը, իր գոյության ընթացքում ըստեղծել է մեր մայր բուհի անցած ուղու հարուստ պատմությունը: Այն իր առաջին իսկ համարներից եղել է համալսարանի խորհրդի, ապա՝ ուսումնական, կուսակցական, արհմիութենական ու ՀԿԾՄ կոմիտեների օրգանը, իսկ 1990 թ. սեպտեմբերից դարձյալ համալսարանի խորհրդի պաշտոնաթերթին է: Նրա էջերում 1930-ական թթ., երբ այն «Հարվածային ուսանող» անունն էր կրում, հանդես են եկել Հր. Անտոյանը, Ա. Տորոնյանը, Ա. Տոնյանը, Վ. Կոտանյանը, Տ. Վաչեղյանը, Ս. Հակոբյանը, Վ. Ռշտունին, Ց. Խաչկոչյանը, Գ. Առտինյանը և այլ անվանյալ գրողներ, որոնց հոդվածներն ու ելույթները նպաստել են համալսարանական կրթության զարգացմանը: Հետագայում, 1950—60-ական թթ. թերթին աշխատակցել են Վ. Համբարձումյանը, Ս. Մեթրախյանը, Ա. Շահինյանը, Գ. Սևակը, Մ. Զբաղաչյանը, Գ. Սահակյանը, էզ. Աղայանը, Մ. Մկրտչյանը, Եղ. Զբաղաչյանը, Վ. Թառայանը և ուրիշներ, որոնց մի մասը ասարթեր ժամանակներում եղել է նրա խմբագրական հանձնախմբի անգամ: Գասպեանների հետ մեկտեղ թերթի աշխատանքներին իր գործուն մասնակցությունն է բերում նաև ուսանողության մի զգալի մասը: Թերթի էջերում անվանի գիտնականների անունների կողքին կարելի է հանդիպել նաև գրականության ու արվեստի հանապազված գործիչների ստորագրություններին: Նրանցից են Գ. Սահարին, Հ. Երբանը, Պ. Սևակը, Ս. Կապուստյանը, Գ. Գասպարյանը, Վ. Դավթյանը, Սարմենը և ուրիշներ: Այստեղ են իրենց զրկական առաջին քայլերը կատարել Գ. Վանանդեցին, Մ. Կորյունը, Վ. Պետրոսյանը և ներկայիս մեր գրողներից ու հրատարակիչներից շատ-շատերը: Թերթի խմբագրության աշխատակիցներից ու խմբագիրներից ոմանք ևս դարձել են գիտության ու մշակույթի գործիչներ:

Անցած յոթանասուն տարիների ընթացքում, ինչ անուն էլ հրել է ԵՐԵՎԱՆԻ Համալսարանը, նրա ուղադրության կենտրոնում ուսումնական կյանքի, գիտահետազոտական աշխատանքների և հասարակական-քաղաքական անցողաբան ուսմանը: Մյուսն է կողմ, մայր բուհի ուսանողության կրթության ու գաստիարակության և նրա կենցաղային խնդիրների լուծումը, պրոֆեսոր-դասախոսական կազմի ու կոլեկտիվի անդամներին հուզող հարցերը: Զանգրադանալով ասանամյակների ընթացքում թերթի կուսակազմի փորձի ու նրա արժանի քաղաքացի ու բազմաբնույթ հարցերի վերլուծությանը, միայն նշենք, որ այսօր էլ այն իր գործունեությամբ նպաստում է ուսման առաջադիմության բարձ-

րացմանը, բարձրագույն կրթության կատարելագործմանը և ժողովուրդության համար որակյալ մասնագետների պատրաստման գործին: Այս քննազավաներում թերթի կատարած աշխատանքը մի քանի անգամ խրախուսվել է հանրապետության պետական ու կուսակցական վերադաս մարմինների կողմից: Այսպես՝ 1974 թ. ապրիլի 3-ին, 1.000-րդ հոբելյանական համարի լույսընծայման առթիվ և ուսանողության բազմակողմանի դաստիարակության գործում ունեցած նվաճումների համար թերթին արժանացել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրի: Այն երկու անգամ էլ պարգևատրվել է ՀԽՍՀ ԲՄՄԿ նախարարության և լուսավորության, բարձրագույն դպրոցի, գիտական հիմնարկների աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեի պատվոգրով, ինչպես նաև համամիութենական այլ պարգևներով:



Երևանի Համալսարանի տպարանում 1988 թ. փետրվարին լույս տեսավ «Ժողովուրդային» հայերեն ամսաթերթի անդամակի համարը, Այն տպագրության են պատրաստում ուսանողները՝ ժողովուրդային ամբիոնի քրեկ դասախոսի ղեկավարությանը: Նրա հիմնական խնդիրն է՝ օգնել ուսանողներին՝ մտաանալու լրագրության մեջ, սովորելու իրենց ասանագիտությանը զգուշանքները, ծանոթանալու ժամանակակից տպագրության կուսակցական ու տպագրատեխնիկական միջոցներին: «Ժողովուրդային» լույսընծայմանը մասնակցելով՝ ուսանողները տեսնում են, թի ինչպես է ծնվում թերթը: Նրա էջերում տպագրվում են լրագրող ուսանողների ստեղծագործությունները, դասախոսներն իրենց փորձն են կրում ուսանողներին՝ հետ, նրանք նախապատրաստում վաղվա լրագրական մեծ հանապարհի դժվարությունները հաշվառելու գործիքներ: Անցած շրջա տարիներն ընթացքում տպագրվել է «Ժողովուրդային» 25 համար:

Այսպիսին է նրանի Համալսարանի ուսանողական մամուլի անցած ուղին:



Երևանի Համալսարանում հրատարակված պարբերականների մեկ այլ խումբ են կազմում գիտական հանդեսները, որոնք, սկիզբ առնելով 1920-ական թթ. կեսերից, տպագրվում են մինչև օրս: 1923 թ. հոկտեմբերի 25-ին համալսարանի վարչությունը, քննության առնելով գիտական

8 «Ժողովուրդային» ունի «Երևանի պետական» մայրաքաղաքի քանադական ֆակուլտետի ժողովուրդային քաղաքի ուսումնական թերթը՝ ենթանվանումը: Ամեն մի համարի խմբերը համարագիր նշանակում են ուսանողները: Սակայն՝ 8 էջ, չափը՝ 26 x 18 սմ, տպագրանակը՝ 150—300:

հանգես հրատարակելու հարցը, որոշում է՝ լույս  
ընծայել «ՀՄԽՀ պետական համալսարանի գի-  
տական տեղեկագիրը»: Հաստատվում է խմբա-  
գրական մուրմին հետևյալ կազմով՝ Զ. Հովհան-  
նիսյան, Մ. Աբրեղյան և Գ. Քալանթարյան: Հե-  
տագալում, 1924 թ. դեկտեմբերին, որոշվում է  
խմբկողմի մեջ մտցնել նաև Ալ. Հակոբյանին, Զ.  
Աշրաֆյանին, Համբ. Քեչիկիին, Ստ. Ղամբար-  
յանին և հանձնարարվում է ուսումնական աշխա-  
տանքների գծով պրոռեկտոր Հայկ Գյուլի-Քելիյա-  
նին՝ ղեկավարել և արդյոցնել «Տեղեկագրի»  
հրատարակության գործը<sup>10</sup>:

«Գիտական տեղեկագրի» առաջին համարը  
լույս է տեսնում 1925 թ., որը նվիրված է Հա-  
լաստանի խորհրդայնացման 5-րդ տարեկիցին<sup>11</sup>:  
Այն ընդգրկում է թև հումանիտար և թև բնական  
գիտությունների տարրեր բնագավառներին նվիր-  
ված մեկուկես տասնյակ հոդվածներ ու հաղոր-  
դումներ: Մինչև 1930 թ. հրատարակվել է «Տե-  
ղեկագրի» 6 համար, որից 2—3-րդը՝ միաց-  
յալ: Այդ համարներում տպագրվել են 40-ից ավելի  
դասախոսների 52 գիտական աշխատու-  
թյուններ, որոնցից 19-ը հատարակագիտության,  
իսկ 38-ը՝ բնական գիտությունների գծով:

Երևանի համալսարանը վերակազմավորվելու  
հետևանքով 1931—1933 թթ. «Գիտական տեղե-  
կագիրը» լույս չի տեսնում: Նրա հրատարա-  
կությունը վերակազմվում է 1934 թ., այս անգամ  
արդեն «ՀՄԽՀ պետական համալսարանի աշխա-  
տություններ» վերտառությամբ ու նոր տարե-  
ըջանով: Առաջին հատերի 1 սերիան կրում է  
«Տեղեկամատյանների գիտություններ» են-  
թանվանումը, իսկ երկրորդ սերիայի 1 պրայմը,  
որը լույս է տեսել 1936 թ., առի «Բիոլոգիական  
գիտություններ» ենթանվանումը:

1939 թ. լույս է տեսնում հանգեսի հերթա-  
կան 9-րդ հատորի «Գիտական աշխատություն-  
ներ» նոր վերնագրով: Նրա՝ ընդհանուր թվահա-  
մարների մեջ ներառվում են նաև Անշխատու-  
թյուններ վերնագրով տպագրված հիշյալ երկու  
պրակները: Այդ անվանը հանդիսը տպագրվում  
է մինչև 1961 թ. վերջը (9—75 հատորներ):

<sup>10</sup> Երևանի համալսարանի արխիվ, գրքի  
№ 250, էջ 5 [Տե՛ս նաև՝ Լ. Գ. Ղարիբջանյան,  
Երևանի պետական համալսարանը (1920—  
1930 թթ.), Եր., «Միտք», 1965, էջ 183]:

<sup>11</sup> Նույն տեղում, գրքի՝ № 254, էջ 37 (Տե՛ս  
նաև՝ Լ. Գ. Ղարիբջանյանի հիշյալ գրքում, էջ  
184):

<sup>12</sup> «Գիտական տեղեկագրի» հիմնադրման  
տարեթիվը Գ. Առնյանի «Հայոց պարբերական  
մամուլը լիակատար ցուցակում» (Երևան, 1934,  
էջ 137, № 1254) նշված է 1926-ը, որը ճիշտ  
չէ, այդ թվականին հանգեսի ոչ մի համար չի  
տպագրվել: Առաջին 6 համարները լույս են տե-  
սել հետևյալ՝ հերթ սկսանությամբ. 1925-ին՝ I,  
1927-ին՝ II—III, 1928-ին՝ IV, 1930-ին՝ V,  
VI: Թավալը՝ 183—636 էջ, չափեր՝ 26×18 և  
22×15 սմ: Տպարանակը՝ 200.—1200:

1962-ի սկզբից վերականգնվում է նրա նախնա-  
կան «Գիտական տեղեկագիր» անվանումը, և  
76-րդ հատորից սկսած տպագրվում է այդ վեր-  
նագրով: Շուտով կարգավորվում է հանգեսի  
հրատարակությունը, այն արդեն լույս է տես-  
նում կանոնավոր պարբերականությամբ, տա-  
րեկան մի քանի հատոր՝ տարբեր սերիաներով  
ու պրակներով: Եվ և՛բ 1925—30 թթ. տպա-  
գրված նրա 6 համարներում բնագիտական և  
հասարակագիտական աշխատանքներ տպագր-  
վում էին միևնույն գրքի մեջ, այս 1934-ից  
արդեն լույս են տեսնում առանձին սերիաներով:  
Մինչև 1962 թ. տպագրվել են ֆիզիկամաթեմա-  
տիկական, կենսաբանական, բանասիրական,  
պատմության, իրավաբանատնտեսագիտական,  
ֆիմիական, երկրաբանաաշխարհագրական սե-  
րիաներով՝ յուրաքանչյուրից մի քանի հատոր:  
Իսկ 1962-ից կարգավորվում է նրա նաև այդ  
սերիաների դասդասումը, երկու-երեք միացյալ  
սերիաներով տպագրվողները առանձնանում և  
դառնում են ինքնուրույն, որոշ ինքնուրույններ  
էլ միավորվում ու կազմում են բնագիտական սե-  
րիա, ավելանում են նորերը՝ քաղաքատնտեսա-  
բան, փիլիսոփայության և այլն: Հնդհանուր  
հաշվարկով, մինչև 1967 թ., «Գիտական տեղե-  
կագիրը» ունեցել է 13 սերիա, և 42 տարիների  
ընթացքում լույս է տեսել 104 հատոր:

«Տեղեկագրի» սկզբնական 8 հատորները չու-  
նեն խմբագրի ու խմբկողմի մասին նշումներ:  
Գրանք երևան են եկել 1939 թ. 9-րդ պրակից  
սկսած: Կենսաբանությունը նվիրված հիշյալ պրա-  
կի պատասխանատու խմբագիրն է պրոֆ. Ա.  
Տեր-Պողոսյանը: Այնուհետև այդ սերիայով լույս  
տեսած մի քանի պրակների խմբագիրը դարձ-  
յալ եղել է նա, որից հետո նրան փոխարինել  
է պրոֆ. Հր. Բատիկյանը: Բնական գիտություն-  
ների մյուս սերիաները խմբագրել են Գ. Մա-  
րտիկյանը, Ա. Շահինյանը, Մ. Տեր-Միքայելյա-  
նը, Գ. Սահակյանը, Գ. Բարսեղյանը, Գ. Քալա-  
յանը և որիչները: Հասարակագիտական սերիա-  
ներով տպագրված պրակները տարբեր ժամա-  
նակներում խմբագրել են Զ. Ժամկոյանը, Զ.  
Բաշիջաղյանը, Վ. Ուշտուխին, Ա. Ծալայանը, Գ.  
Շաքարյանը, Ն. Բովսմայանը, Ս. Օսիպյանը և  
այլք, իսկ բանասիրության պրակները՝ Հովհ.  
Մամիկոնյանը, Ա. Ղարիբջանը, Ռ. Հովհաննիս-  
յանը: 1952-ից հիշյալ պրակը սկսում է խմբա-  
գրել էդ. Աղայանը, այնուհետև՝ Ս. Բաղդասարը, Զ.  
Սալախյանը, Մ. Սկրյանը, Այդ ընթացքում «Տե-  
ղեկագրի» բոլոր սերիաներն էլ ղլխալոր խմբա-  
գրի հետ մեկտեղ արդեն ունեին նաև խմբկոլ-  
մներ, պատասխանատու քարտուղարներ և իրմ-  
բագրի տեղակալներ:

«Գիտական տեղեկագիրը» նպաստել է բնա-  
կան և հումանիտար գիտությունների զարգաց-  
մանը Հայաստանում: Նրա էջերում տպագրվել  
են համալսարանի ամբիոններում ու լաբորատո-  
րիաներում կատարված գիտահետազոտական

աշխատանքների արգելանքները: Ազգերական ջրբանոմ այն լույս է տեսել միայն հայերեն՝ ունենալով ուսանողի ու անգլերեն ամփոփումները: Սակայն հետագայում նրա էջերում հայերենին զուգահեռ տեղ են գտնում նաև սուսերեն հոդվածներ՝ հայերեն ամփոփումներով: Թուսերեն նշագրեր հիմնականում նվիրված են բնական գիտությունների, ինչպես նաև ուսուցողության զարգացման խնդիրներին:

Մեր նպատակից դուրս է հանդեսի բնագր-տական պրակների վերլուծությունը: Միայն նշենք, որ նրա՝ 1925—1967 թթ. լույս տեսած 106 համարների մեծ մասը նվիրված է բնական գիտություններին: Նրանցում իրենց հիմնական հետազոտություններով հանդես են եկել ականա-վոր գիտնականներ՝ լժպկազետներ Գ. Արեշյանը, Հ. Քեչեկը, Ս. Հակոբյանը, մաթեմատիկոսներ ու ֆիզիկոսներ Ալ. Հակոբյանը, Հ. Նավասարտիկյա-նը, Հ. Անժուրը, Ա. Տեր-Մկրտչյանը, Ս. Մա-չուրյանը, Ա. Շահինյանը, կինսարաններ Ա. Տեր-Պետրոսյանը, Պ. Քալանթարյանը, Մ. Չալ-լախյանը, Է. Հասարթյանը, Ա. Քարառաջյանը, քիմիկոսներ Ստ. Ղամբարյանը, Լ. Թոտիկյանը, Վ. Քառայանը, Մ. Գարրիկյանը, Մ. Գանդյանը և շատ ուրիշներ:

Հումանիտար և հասարակական գիտություն-ները ևս հանդեսում մեծ տեղ են զբաղեցրել: Այնտեղ իրենց հետազոտություններն են տպա-գրել Հայաստանի անդրանիկ բուհի շտաբը հա-մախմբված գիտնականները: Առաջին համարում է տպագրվել ականավոր պատմաբան Հ. Մա-նասեղյանի «Գիտություններ հին Հայաստանի շինականների դրություն մասին մարզպանության շջշանում» ուսումնասիրությունը, որ հեղինակը նկատում է, որ միանդամայն հնաքավոր է հլած նյութերն իսկ հավաքելով ու օգտագործելով՝ գեղե հայոց անցյալի պատմագիտական հետազոտու-թյունները նոր հունի մեջ: Այդ նպատակին էլ նվիրում է նա իր ողջ կյանքը՝ ստեղծելով բազ-մաթիվ մենագրություններ հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության օւսումնասիրության ուղղությամբ: Նրա Լրվորող հոդվածը «Գիտու-կան տեղեկագրում» տպագրվում է 1928 թ. 4-րդ համարում՝ «Նյութեր հին Հայաստանի տնտե-սական կյանքի պատմության» վերնագրով:

Հնագույն շրջանի հայոց պատմության օղն-տեսանյակ հարցերի քննարկման է նվիրված մեր մյուս մեծանուն պատմաբանի՝ Անդր. (Առա-քել Բարսիսյան) հոդվածը, որը զետեղված է «Տեղեկագրի» 1927 թ. 2—3-րդ միացյալ հա-մարում:

«Տեղեկագրի» առաջին համարներում են տպագրված Ա. Խաչատրյանի «Հույն պատմի-կների տեղեկությունները հին Հայաստանի ու-կնհանքերի և նրանց տվյալ մասին» տեղադրական ուսումնասիրությունը, նշանավոր բժշկագետ Լ. Հովհաննիսյանի «Գրիգոր Մագիստրոսը որպես XI դարու հայ բժշկության ներկայացուցիչ», պատմաբան Աջ. Հովհաննիսյանի «Բեռնիֆ դեյա Քրեզոնը և նրա ուսուցիչները հետազոտություն-ները: Առանձին հետաքրքրու-թյուն է ներկայաց-

նում համալսարանի այն ժամանակվա անկա-թը: Հովհաննիսյանի «Հայաստանի պետական համալսարանը հոդված» նվիրված հանրապի-տություն անդրանիկ բուհի 5-ամյա հոբելյանին: Այն տպագրվել է «Տեղեկագրի» 1927 թ. № 2—3-ում: Այդ նույն համարում է տպագրվել նաև Հայաստանի ֆեոդալական շրջանի պատմության խնդիրներով զբաղվող պատմաբան Հ. Մորյանի «Արարների հարկային քաղաքականությանը ա-վատական Հայաստանում» ուսումնասիրու-թյունը, որ հեղինակը ցույց է տալիս աթարների հարկային քաղաքականության ազդեցությունը ֆեոդալական Հայաստանի արտադրական հարա-բերությունների հետագա զարգացման վրա:

Մեծանուն գիտնական Մ. Արեղյանի «Հին գուսնական ժողովրդական երգեր» աշխատու-թյունը ևս շարունակաբար տպագրվել է հան-դեսի մի քանի համարներում (№ 2—3, 4, 6): Հայ գրականության տարբեր հարցեր են շոշափ-ված նաև գրականագիտ Ա. Տեղեկյանի մի քանի հետազոտություններում, որոնցից են՝ «Նկատողություններ մեր գյուղագրիների մասին» (№ 2—3), «Գրախնդության ազդեցության պրոբլեմը» (№ 6), «Նալբանդյանի էպիտի-կան», «Պուշկինը հայ գրականության մեջ» (№ 10) և այլն:

Հիմնականում այս խնդիրներն են քննարկվել «Գիտական տեղեկագրի» առաջին համարներում: 1934—1940 թթ. նրա էջերում արժանավել են դուր ֆիզիկամաթեմատիկական ու քննադատական հարցեր: Միայն 1940-ից սկսած նորից աշխու-ժանում է նրա հասարակագիտական սեքսանտի հրատարակությունը: Այդ շրջանում են տպա-գրվել Ա. Մովսիսյանի «Հույնացի դպրոցի ժա-գումը և նրա հետագա վիճակը» (№ 13, 1940 թ.), Լ. Խաչիկյանի «Գլուխներ: համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները» (№ 19, 1943 թ.), Վ. Ուշանուն «Հայ նարդիկի Հովսեփ Տեր-Մովսիսյանը» (№ 19, 1943 թ.) և նրա մյուս աշխատությունները՝ նվիրված հայ նարդիկական գաղափարախոսության, հայ հասարակական հասանքների պատմության ու Անդրկովկասի կապիտալիստական դարգացման խնդիրներին (№ 29, 27), Ս. Տեր-Ավետիսյանի «Արրահամ կրիտացու հիշատակարանը», «Ելու-թյունը Հեղինատանի հայ գաղութի պատմության համար» (№ 13, 1940 թ.), Գ. Լոնյանի «Գառ-նիի հեթանոսական տաճարը» (№ 23, 1946 թ.) ուսումնասիրությունները:

«Տեղեկագրի» իր էջերում լայն տեղ է ավել հատկապես հայոց լեզվին, հայ բարբառագի-տությանը և ընդհանուր լեզվաբանությանը նվիր-ված նյութերին: Առաջին իսկ համարում մեծա-նուն լեզվաբան Հր. Աճառյանը տպագրել է իր իր-ւ հետազոտությունները, որոնցից մեկը նվիրված է գյուրանների ու թումուրիների կրոնի բնույթնասիրությանը, իսկ մյուսը՝ արքայապետում է Փալատու Բուզանդի Պատմության մեջ օգտա-գործված «սիւս» բառի իմաստը: Հետաքրքրա-նա նա շարունակում է աշխատակցել հանդեսին՝ Հատկանշական է, որ նրա 5 հատարանից՝ «Հայ-

յոց անձնանունների բառարանի» 4 սովորածավալ գրքերը (I—IV) գրադեցրել են «Տեղեկագրի» առանձին հատորներ (XXI, XXIV, XXV, XXVI), որոնք լույս են տեսել 1942, 1944, 1948 և 1948 թթ., իսկ վերջին՝ V հատորը, որը լույս է տեսել 1961 թ., տպագրվել է առանձին գրքով, Երևանի համալսարանի հրատարակությունը: Մեծանուն լեզվարանը, դրանցից զատ, «Տեղեկագրի» XIX հատորում (1940 թ.) տպագրել է նաև իր «Քննություն պոլսահայ բարբառի» արժեքավոր աշխատությունը: «Պարսկական բնկագրերի լուծման պատմությունը» փաստորեն նրա սկարավախ կրքը՝ եղավ՝ տպագրված «Տեղեկագրի» 1951 թ. 34-րդ հատորում:

Ակադեմիկոս Գր. Ղափանցյանը ևս եղել է «Տեղեկագրի» գործուն հեղինակներից մեկը: Նրա «Հարթթևական լեզվաբանությունն ու տեսությունը» տպագրվել էր դեռևս հանդեսի 1927 թ. 3—8-րդ համարում, իսկ «Վրացի ազգային բառի ծագման հարցի շուրջը հարված»՝ № 11-ում (1930 թ.), «Տեղեկագրի» 1948 թ. XIV հատորն ամբողջությամբ զբաղված է նրա աշխատությունները (Վերաբարձի պատմությունը, «Հեթանոսական աստվածները հայոց մեջ» և «Հին Հայաստանի ապոկրիֆիկայի պատմալեզվաբանական նշանակությունը»):

Առաջին անգամ այստեղ են տպագրվել նաև պոետներին էր Աղայանի «Քննություն Մեղրու բարբառի», Ա. Ղաբրչյանի «Հայերեն բարբառների մի նոր էջուղ», «Հայերենի բարբառների դասակարգման խնդիրը», Ատ. Արթրյանի «Ժամանակակից հայոց լեզվի խնամարձակը» (№ 19, 1947 թ.), Գ. Սեմաի «Վասիլի մասերի ուսումնառք», «Վասյոց լեզվի բառազանգ» (№ 27, 1948 թ.) աշխատությունները, ինչպես նաև դրասական գրող Գ. Գեվորգյանի «Մեծած հոգիների» լեզուն և ոճը» (№ 39, 1952 թ.) սուսմանաիրությունները:

«Գիտական տեղեկագիրը» ջայլել է ժամանակին համընթաց: Մեծ Հայրենականի տարիներին նրա էջերում բազմաթիվ էջեր են տպագրվել՝ նվիրված հայրենասիրությունը: Մի ամբողջական համար է նվիրվել այդ թեմային (№ 20, 1940 թ.), որ զետեղվել են Ա. Տրտրյանի «Վաչ հայրենասիր գրողներ», Մ. Մկրչյանի «Հայրենիքի պաշտպանությունը գաղափարը ու նրա ծնած հերոսները 3-րդ դարի հայ պատմիչների գործերում», Է. Աղայանի «Մեղրու են Վասյոցի արտադրությունները և ինչպես նրանք անցան իշխանությունը գլուխ», Վ. Քրտունու «Անցյալ դարավերջի հայկական մամուլը գերմանական ֆաշիզմի գիշատիչ նախորդների մասին», Է. Մամիկոնյանի «Ֆաշիզմը կուլտուրայի թշնամի», Է. Պետրոսյանի «Արևմտուղի և Ամերիկայի առաջավոր գրողներից ֆաշիզմի դեմ», Դ. Վարդապետյանի «Վաչիզմը առաջավոր թերիակաների և գիտական մտքի դեմ» սուսմանաիրությունները, որոնց մեջ մի կամից անցյալի հայ հերոսների օրինակով խոստովանվում է կարևոր բանաձևի շարքերում ֆաշիզմի դեմ ժողովուրդի հայ ռազմիկների և

մյուս կողմից մերկացման ֆաշիզմի մարտալայ էությունը:

«Տեղեկագիրը» անդրադարձել է նաև նշանավոր մարդկանց կյանքին ու գործունեությունը: Նրա էջերում տեղի են տպագրվել Անանյա Միրակացու, Պերսի Բիշի Շևլիի, Միքայիլ Նալբանդյանի, Նիկոլայ Չուլդի, Սերենցի, Պետրոս Գուրյանի և ուրիշների գիտական ու գրական ծառայությունները:

Այս ամենի հետ այսպես անհրաժեշտ է նշել, որ «Գիտական տեղեկագիրը» գիտությունը ծառայելու հետ մեկտեղ տուրք է տվել անհատի պաշտամունքին: Նրա էջերում բազմաթիվ էջեր են տպագրվել՝ նվիրված Ի. Ստալինի կյանքին ու գործունեությանը, նրա ստեղծած զեղվարանական ուսումնքին ու ազգային հարցի «լուծմանը»: Գրքին ամբողջությամբ այս հարցերն են շրջափում հանդեսի 1951 թ. XXXI և և XXXIV հատորները:

Այսպիսին է Երևանի պետական համալսարանի «Գիտական տեղեկագրի» 25-ամյա գործունեության մոտավոր պատկերը: 1950-ական թթ. սկսվում է հանդեսի գոյության նոր շրջանը, երբ նրա սերիաների հրատարակությունը դրվում է ֆակուլտետների վրա: Այս շրջանում էլ նրա գործունեության ուրուսում կարևոր տեղ են զբաղեցնում գիտությունները՝ զուրապման խնդիրները, համալսարանական գիտության նվաճումների տարածումը:



Երևանի պետական համալսարանի գիտական պարբերականների շարքը պետք է դասել նաև «Ն. Սա. Մառի անվան կարիքների աշխատություններ» վերատառությամբ հանդեսի<sup>12</sup>, որի

<sup>12</sup> Այս հանդեսի վերաբերյալ աննշտությունները զատ հայ մամուլին նվիրված գրքին բոլոր մասնակցողական աշխատանքներում, որոնք արդյունք են Հավ. Պետրոսյանի «Հայ պարբերական մամուլի բերթապարֆայում» (հատ. 3, Երևան, 1954, էջ 474), անդ զուտ յխաների Բանն այն է, որ ՀեՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտը ևս, որն այդ ժամանակ կրում էր Մառի անունը, նույն շրջանում տպագրել է «Աշխատությունների ժողովածու» վերատառությամբ նույնատիպ հանդեսի 4 պրակ՝ 1946—1949 թթ., որի 1-ին պրակը նույնացվել է համալսարանի «Աշխատությունների» 1-ին պրակի հետ: Այնինչ համալսարանի «Ն. Սա. Մառի անվան կարիքների աշխատությունները» ոչ մի կապ չունեն հիշյալ հրատարակության հետ: Երևանի համալսարանի «Աշխատությունները» լույս են տեսել 1945, 1947—1948 թթ., գլխավոր խմբագիր՝ Գր. Ղափանցյան, ծառայել՝ 284, 274, 358 էջ, լակուր՝ 27×13 սմ, տպարանումը՝ 300—1500, Հայկ. ԽՍՀ ԳԱ Ն. Սա. Մառի անվան լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու» գլխավոր խմբագիրն է Ա. Ղաբրչյանը, ծավալը՝ 273—310 էջ, լակուր՝ 31×15 սմ, տպարանակը՝ 500—1000:

նպատակն է գիտական վերլուծության ենթարկել ականաւոր լեզվաբան, նշանաւոր հայագետ Նիկողայոս Մառի (1864—1934) ժառանգութիւնը, նրա հայագիտական ու կովկասագիտական ուսումնասիրութիւնները: Հանդեսի անդրանիկ համարը բացւում է ակադ. Գր. Ղափանցյանի գրքին պատկանող «Յմբարտութեան կողմից» մատուցի խոսքով, որ հեղինակը հակիրճ կերպով ներկայացնում է նորաստեղծ հանգստի նպատակն ու խնդիրները: Այնուհետև «Նողզմաներ» բաժինը դարձյալ բացւում է Գր. Ղափանցյանի «Մասը և հեղինորպարանութիւնը» ծավալուն ուսումնասիրութեամբ: Նույն բաժնում են ապագ լած նաև Աշ. Արբախանյանի «Մասը և հայկական մատենագիտութիւնը» ընդարձակ աշխատանքը, որին կցված է մի հավելած, որ տեղ ն: շտեղ ն. Մառի՝ հայագետ Գուլուստ Տեր-Մարտիանին հղած անտիպ նամակները՝ քաղված Մատենադարանի արխիւային բաժնից: Մյուս հողվածը նույնպես Գր. Ղափանցյանինն է. խեթական մի առասպելի մասին՝ կապված կոտնիկի ու գարնան աստվածութեան հետ: «Շաղրղղումներ» բաժնում գետնողված է իրար պատմում է Հայկական համալսարանի կամ ակադեմիայի ստեղծման գործում Մառի ցուցաբերած մասնակցութեան մասին: Վերջում գետնողված է Ս. Ղաղարյանի գրախոսութիւնը Գր. Ղափանցյանի «Ուրարտուի պատմութեան» վերաբերյալ:

«Աշխատութիւններ» 2-րդ հատը նույնպես հարուստ է հայագիտական ուսումնասիրութիւններով: Այն զարձակ բացվում է Գր. Ղափանցյանի «Մառի գիտական ժառանգութիւնը անձա՛ է ներածական հողվածով: Մյուս աշխատութիւնները վերաբերում են Մաշտոցի սամաստյան գործունեութեան, Հր. Ահաթյանի «Շաղրղղումներ» արմատական բառարանում վրացերէնի օգտագործման, Կարմիր բլուրի արձանագրութիւններին, սեշուղը անձնական ստուգարանութեան, Հայաստանում XIX—XIV դդ. արևելագործական գաղափարախոսութեան, կիպարիտ զորավարի ու նրա նախորդների գործունեութեան լուսաբանութեանը, որոնց հեղինակներն են Գ. Սևակը, Ա. Մուրվալլյանը, Մ. Իսրայելյանը, Լ. Խալիկյանը, Ս. Երեմյանը և այլք:

Փողովածուի 3-րդ հատորի բովանդակութեան մեծ մասը ևս աննշվում է Մառի լիզվագիտական հետազոտութեանը հետ: Այստեղ տպագրված Գր. Ղափանցյանի, Բ. Առաքելյանի, Ա. Կարինյանի, Հ. Ջնդիկի և մյուսների աշխատանքները՝ վերաբերում են հայերենի առանձին բառերի ստուգարանութեանը, Մառի աշխատութիւններում հայ ժողովրդի պատմութեան մի քանի հարցերի քննարկմանը, ինչպես և Մառի ու հայ մատենագրութեան, Մառի և քրգագիտութեան, Չանֆիզայի ուրարտական արձանագրութեան վերլուծութեանը:

Այստեղ պետք է նշենք նաև, որ Հայկ. ԽՍՀ ԳԱ լիզվի ինստիտուտի հրատարակած «Աշխատութիւններ» ժողովածուն Երևանի համալսարանի նույնանուն ժողովածուի օրգանական շա-

րունակութիւնն է և լրացնում է նրան, ավելի ամբողջական ու համակողմանի է դարձնում Ն. Յա. Մառի հայագիտական ժառանգութեան վերլուծութիւնն ու արժեքավորումը: Այդ զուգահեռ հրատարակութեան 4 հատորների 6 պրակներում գետնողված հայագիտութեան ժամանակի մեծանուն ներկայացուցիչների վեց տասնյակից ավելի ուսումնասիրութիւնների արդիական գիտական արժեքավորումը թողնելով մասնագետներին, նշենք միայն, որ այդ նյութերը լուրջ ներդրում են հայ ժողովրդի պատմութեան, հայերի ու կովկասյան ժողովուրդների լեզուների, նրանց մշակութիւնների փոխանցութիւնների, ինչպես և ընդհանուր լեզվաբանութեան շատ հարցերի պարզաբանման ասպարեկում:

Գ Ծ

Երևանի համալսարանում գիտական պարբերականներ են տեղեկացնում նաև ուսանողների ու ասպիրանտների համար: 1940 թ. հիմնադրվում է «Ուսանողների գիտական տեղեկագիր» հանդեսը<sup>13</sup>, որը լուստարանում է ուսանողների կողմից կատարվող գիտահետազոտական աշխատանքները: Ակտիւնական ջրջանում բնագիտական և հասարակագիտական նյութերը նրանում տպագրվում են համառոտ միջնային համարում: Միայն 1950-ական թթ. են դրանք լուսկրում տպագրվել առանձին սերիաներով:

Հիմնադրման տարում լույս է տեսել «Ուսանողների գիտական տեղեկագիր» երկու համար, 1941-ին՝ 3-րդը, այնուհետև՝ մինչև 1948 թ. ու մի համար չի տպագրվել: Գրանից հետո էտրգավորվում է նրա հրատարակութեան գործը և սկսում է տպագրվել պարբերաբար, տարեկան 1—2 համար: Նրա էջերում գետնողվի են Երևանի համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանողների ու ասպիրանտների գիտական աշխատանքները, որոնց հեղինակներից շատերը, օրինակ, էդ. Զրբաշյանը, Գ. Ղարբիշյանը, Լ. Բարաշյանը, է. Պիվազյանը, Ռ. Իրիանյանը, Մ. Մելիքյանը, Վ. Մկրտչյանը և ուրիշներ դարձել են ճանաչված գիտնականներ:

«Ուսանողական գիտական տեղեկագիր» ունեցել է ընդամենը 16 համար: Վերջին պրակը լույս է տեսել 1971-ին և ամբողջութեամբ նվիրված է տնտեսագիտութեանը: Այդ համարից հետո ընդհատվել է նրա հրատարակութիւնը:

<sup>13</sup> «Ուսանողական գիտական տեղեկագիր» (1963—1972 թթ.) հրատարակվել է նաև «Ուսանողների գիտական աշխատանքների ժողովածու» (1940—1948 թթ.), «Ուսանողների գիտական ընկերութեան աշխատութիւններ» (1949 թ.), «Ուսանողական գիտական աշխատութիւնների ժողովածու» (1953—1960 թթ.) անուններով: Ունի խմբից, ծավալը՝ 133—240 էջ, չափեր՝ 28×18 ռմ, սպաքանակը՝ 1.000:

Երևանի համալսարանի գիտական պարբերականների շարքում իր ուրույն տեղն ունի «Երիտասարդ գիտաշխատող» հանդեսը<sup>14</sup>, Այն հիմնադրվել է 1965 թ. և նույն տարում երկու համար «Հողվածների ժողովածու» վերնագրով տպագրվելուց հետո, 1966 ին անվանվել է «Երիտասարդ գիտաշխատող» և այդուհետև պարբերաբար լույս է տեսել տարին երկու անգամ՝ մեկը՝ քնագիտական, մյուսը հասարակագիտական սերիաներով:

Իր գոյության երկու տասնամյակների ընթացքում «Երիտասարդ գիտաշխատողն» ունեցել է 33 համար, որից 18-ը քնագիտական, իսկ 15-ը հասարակագիտական սերիայով: Այն տպագրվել է երկու լիդով՝ հայերեն և աստերեն, հայերեն հոդվածները ունեցել են աստերեն, իսկ աստերենները՝ հայերեն ամփոփումներ:

«Երիտասարդ գիտաշխատող» հանդեսի զբաղմունքը նպատակն է եղել իր շուրջը համախմբել ինչպես համալսարանի, այնպես էլ հանրապետության մյուս բուհերի ու գիտահետազոտական հիմնարկների երիտասարդ գիտնականներին, տրպագրել նրանց արժեքավոր ուսումնասիրությունները: Նրա էջերում գեանգրվել են շուրջ 500 երիտասարդ գիտնականների ու ասպիրանտների աշխատանքները՝ նվիրված մաթևմատիկային ու մեխանիկային, փիլիսոփայությանն ու լոգիկային, ֆիզիկային ու քիմիային, երկրաբանությանն ու աշխարհագրությանը, բանասիրությանն ու իրավաբանությանը, անտեսագիտությանն ու սոցիոլոգիային և շատ այլ գիտություններին: Իհե՞թիվ են կազմում նաև այն նյութերը, որոնք վերաբերում են հայ, ուսու և Միության մյուս ժողովուրդների պատմական անցյալին, նրանց մշակույթների փոխադրություններին:

Այս հանդեսի մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ նրա էջերում աճել են երիտասարդ ասպիրանտները, ձևոց բերել գիտական աշխատանք կատարելու փորձ ու հմտություն: Բավական է նշել այն փաստը, որ նրանում տպագրված շատ նյութեր հետագայում զարգել են մենագրությունների, թվեանուական ու դոկտորական թիզերի թեմաներ, խորագմանվել են այլ լիզուներով:

<sup>14</sup> «Երիտասարդ գիտաշխատող» հանդեսի «Հողվածների ժողովածու» անվամբ լույս տեսած պրակները խմբագրել են Յ. Գ. Համբարձումյանը և Ս. Վ. Ավագյանը: Այնուհետև երկու սերիան էլ ունեցել է խմբակու, զբաղմունք խմբագիրներն են եղել Ռ. Հովհաննիսյանը, է. Գ. Զուրարյանը (քնագիտ. սերիա), Ա. Թովմայանը, Մ. Մելիքյանը (հասարակագիտ. սերիա): Ծավալը՝ 156—254 էջ, շափսը՝ 25×17 սմ, տպաքանակը՝ քնագիտ. սերիայինը՝ 600, հոս. գիտ. սերիայինը՝ 1200:

Երևանի համալսարանի «Գիտական տեղեկագրի» սերիաների տպագրությունը 1950-ական թթ. դրվելով ֆակուլտետների վրա, պատշաճ մակարդակով չի ապահովվում, կրում է ձևական բնույթ: Դարձյալ այն լույս է տեսնում անկանոն պարբերականությամբ և մեծ ուշադրությունով, որն էլ բացասաբար է անդրադառնում նրա տարածման վրա: Հանդեսի պրակների տեղախաղված հրատարակությունը չի նպաստում գիտության տվյալ ճյուղի զարգացմանը: Մյուս կողմից այդ պրակներում զետեղված աշխատանքների մի զգալի մասը չի ունենում գիտական պատշաճ մակարդակ, նույնիսկ տպագրվում է խմբագրական դրույթ թերություններով: Այս ամենը նկատի ունենալով, 1966 թ. Երևանի համալսարանի խորհուրդը որոշում է ընդունում 1967-ի նոր տարեշրջանից վերականուցել ու բարելավել «Գիտական տեղեկագրի» հրատարակությունը և միաժամանակ հիմնագրել նոր հանդեսներ: Ըստ այդ որոշման, «Գիտական տեղեկագիրը» վերածվում է միայն քնական գիտությունների քառամսյա հանդեսի՝ և, որպեսզի նրա հին և նոր համարների միջև արհեստական խզում չառաջանա, ու սովնդույթը լիախաղվի, վերանցվի բայի, նույն է թողնվում նաև համարական կարգը: Նորատեղծ հանդեսի անդրանիկ համարը, որը լույս է տեսնում 1967 թ. օգոստոսին. կրում է № 1 (105) համարանիշը, այնինքն, զա վկայում է, որ շարունակվում է նրա նույնիսկ համարակալումը և փակագծերում նախորդ 104-ից հետո հերթական համար է նշվում 105-ը:

«Գիտական տեղեկագրի» նախկինում լույս տեսնող հասարակագիտական սերիաների ու պրակների փոխարեն հիմնադրվում է նոր՝ «Բաները Երևանի համալսարանի» հանդեսը<sup>15</sup>, Այս երկու գիտական պարբերականներին դուզահու անդգծվում է նաև «Երևանի համալսարան» լրատունը<sup>17</sup>:

<sup>15</sup> «Գիտական տեղեկագիրը» կրում է նաև «Բնական գիտություններ» ենթանվանումը: Ունի խմբակու, զբաղմունք խմբագիրներ են եղել Լ. Զալթիկյանը, Վ. Առյանյանը, 1989-ից՝ Լ. Զուրարյանը: Ծավալը՝ 180—210 էջ, շափսը՝ 25×17 սմ, տպաքանակը՝ 550—900:

<sup>16</sup> «Բաները Երևանի համալսարանի» հանդեսը կրում է «Հասարակական գիտություններ» ենթանվանումը: Ունի խմբակու, զբաղմունք խմբագիրներ են եղել է. Զրուրյանը, Լ. Ֆելիքսյանը, 1985-ից՝ է. Գ. Առյանյանը: Ծավալը՝ 208—254 էջ, շափսը՝ 25×17 սմ, տպաքանակը՝ 1185—3150:

<sup>17</sup> «Երևանի համալսարան» լրատունը 1980-ից կրում է «Գիտահիֆոմուսյուն հանդես» ենթանվանումը: Ունի խմբակու. զբաղմունք խմբագիր է եղել Բ. Բաղդասարյանը, 1985-ից՝ Յու. Վարդանյանը: Ծավալը՝ 56—124 էջ, շափսը՝ սկզբում 26×20, ապա՝ 20×15 սմ, տպաքանակը՝ 600—1500:



Այս շրջանում համազարանում լույս էին տեսնում նաև «Երիտասարդ գիտաշխատողը» և «Ուսանողական գիտական տեղեկագիրը», որոնք նորաստեղծ հանգստիների հետ մեկտեղ լուսաբանում էին ոչ միայն հանրապետության առաջատար ուսումնագիտական հաստատության հետազոտական աշխատանքները, այլև տալիս Միութեան մեջ տեղի ունեցող գիտական վերափոխումների ընդհանուր պատկերը:

«Գիտական տեղեկագիրը» սկզբից եւթ մշակում է իր կայուն բաժինները, որոնք են «Մասնատրիկա», «Մեխանիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Երկրաբանություն», «Ֆիզիկական աշխարհագրություն» և այլն: Սրանց հետ մեկտեղ այն տեղի նաև «Հագրագրամներ», «Բանալեւն և քննարկում», «Գիտական կյանք», ինչպես նաև «Նոր գրքեր» բաժինները, որոնցում հոգվածներ, հաղորդումներ ու նամակներ են տալագրվում գիտության վիճելի շատ խնդիրների շուրջը: Հայաստանում առաջին տեղում այս հանգստի էջերում են նյութեր տպագրվել՝ նվիրված մասնատրիկական կիրառականի կային, միկրոֆլորային, շրջակա միջավայրի պահպանությանը և գիտության այլ նորագույն ճյուղերի զարգացմանը:

«Բաները Երևանի համալսարանի» հանգստի էջերում հասարակական և հումանիտար գիտությունների, ինչպես նաև հայագիտության գծով տպագրվում են ժանրակազմ հոգվածներ, որոնք ի մի են բերում այդ գիտաճյուղերի գծով աշխարհի շատ գիտնականների ստացած արդյունքները:

«Բաներին» տեղի «Հոգվածներ», «Բանալեւն և քննարկում», «Հրապարակումներ և հաղորդումներ», «Գրքերի տեսություն» և «Գիտական կյանք» մշտական բաժինները, որոնցում անցած 25 տարիների ընթացքում տպագրվել են շուրջ 3.000 հոգվածներ ու այլ նյութեր:

Խնդիրների մեկ այլ խումր է քննարկում «Երևանի համալսարան» լրատուն: Նրա էջերում լուսաբանվում են համալսարանում տարվող գիտահետազոտական և ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքը: Այն տեղի «Ռուհական կյանք», «Գիտական կյանք», «Ուսանողական առթյալ», «Մշակութային կյանք», «Մեր գաստիպուները», «Մեր հոգեկարները», «Գրքերի աշխարհում», «Լրատուն» և «Անհրաժեշտ» բաժինները, որոնցում տպագրված նյութերը ընթերցող լայն շրջաններին ծանոթացնում են Երևանի պետական համալսարանում տարվող գիտամշակութային ու ուսումնադաստիարակչական աշխատանքներին, Հայաստանում բարեբաղույն կրթության զարգացմանը: Այն ակնարկային նյութեր է տպագրում Երևանի համալսարանի ակադեմիկոս գիտնականների կյանքի ու գործունեու-

թյան մասին, անդրազանում աշխարհի առաջատար համալսարանների պատմությունը:

Երևանի պետական համալսարանի գիտական պարբերականները հայտնի են ոչ միայն մեր երկրում, այլև արտասահմանում ու Միությունում: Այդ են վկայում նրանց խմբագրություններում ստացվող բազմաթիվ նյութերն ու նամակները: Նրանց էջերում, Երևանի համալսարանի ճանաչված գիտնականների աշխատանքներից բացի, տպագրվում են նաև մեր հանրապետության, Միության ու արտասահմանյան բուհերի ու գիտահետազոտական ինստիտուտների աշխատողների հետազոտությունները: Այդ հանգստիները ԽՍՀՄ նախարարների խորհրդին առընթեր Բարձրագույն ատուտագիտության հանձնաժողովի կողմից գրանցված են որպես համամիութենական գիտագիտական հրատարակություններ, որոնցում կարող են գտնվել գոկտորական և թեկնածուական թեզերի հիմնական արդյունքները: Այս առումով պետք է նշել, որ միայն վերջին մի քանի տարում նրանց էջերում տպագրված նյութերի տասնյակ հեղինակների պաշտպանել են գոկտորական թեզեր, իսկ շատերն էլ դարձել են գիտությունների թեկնածուներ: Այս փաստը մեկ սնգամ ևս վկայում է այն մասին, որ համալսարանի գիտական հանգստիները մեծապես խթանում են տարբեր գիտաճյուղերի զարգացմանը և գիտաշխատողների աճին: Նրանք իրենց արծարծած հարցերի բազմազանությամբ ու խորությամբ, գիտական բարդ խնդիրների լուծման փորձով ու վարչաօրհաններով լուրջ հեղինակություն են վայելում մասնագետների շրջանում, տարածում են գիտության ուսաչափման գաղափարները, նպաստում հասարակական մտքի առաջընթացին և գիտական լրագրության սկզբունքների մշակմամբ հարստացնում են հայ նորագույն մամուլի պատմությունը:

Վ. Ս. ՄԱՂԱՅԱՆ

<sup>18</sup> Երևանի պետական համալսարանը ՀԽՍՀ ԲՍՄԳ նախարարության հետ համատեղ 1976 թ. սկսած քննական և հաստատական գիտությունների սերիաներով, պարբերաբար, լույս է ընծայում շուրջ մեկ տասնյակ գիտական աշխատությունների միջուկային ժողովածուներ, որոնցից են, օրինակ, «Մասնատրիկա», «Ֆիզիկա», «Մեխանիկա», «Կենսաբանություն» «Քիմիա» և քիմիական տեխնոլոգիա», «Աշխարհագրության հարցեր», «Հայոց լեզու և գրադասություն», «Պատմության հարցեր», «Արտասահմանյան գրականություն» և օտար լեզուներ», «Արևելագիտության հարցեր», «Փիլիսոփայության հարցեր» և այլն, որոնց քննարկումը մեր նպատակին զուլա է: